

# Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն  
Ուղեցույց Մասնավոր Փոքր Հավաքների Համար

**ՆՇՈՒՄ՝** Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուն արձակել է [Առողջապահության Պատասխանատուի «Ժամանակավոր, Թիրախավորված՝ Ավելի Անվտանգ Է Տանը Հրամանը»](#)՝ պայմանավորված COVID-19-ի դեպքերի, հոսպիտալացումների և մահերի թվի կայուն և զգալի աճով:

Արգելվում են բոլոր հանրային և մասնավոր հավաքներն ու միջոցառումները, որտեղ ներկա են մեկից ավելի տնային տնտեսությունների անդամներ, բացառությամբ՝ կրոնական արարողությունների և բացօթյա քաղաքական դրսևորումների, և ինչպես նախատեսված է սույն Վերանայված Ժամանակավոր Հրամանի 9-րդ Պարբերությունում: Թույլատրված հավաքները պետք է համապատասխանեն դիմակների օգտագործման, ֆիզիկական հեռավորության պահպանման և տնային տնտեսությունների խմբերի միջև վեց ոտնաչափ հեռավորություն ապահովելու համար անհրաժեշտ զբաղվածության կրճատման պահանջներին:

Հավելյալ տեղեկությունների համար՝ տե՛ս [Առողջապահության Պատասխանատուի «Ժամանակավոր, Թիրախավորված՝ Ավելի Անվտանգ Է Տանը Հրամանը»](#), որը տեղադրված է այս կայքում՝ [ph.lacounty.gov/media/Coronavirus/reopening-la.htm#orders](http://ph.lacounty.gov/media/Coronavirus/reopening-la.htm#orders)